Դարույր Սևակ

Մանկական ճոճք

Կապույտ-կապարե մենակության մեջ անծիր երկնքի
Թռչուններն իրենց երգն են չորացնում:
Մինչդեռ լեռների պղնձե-պաղած միայնության մեջ
Ավելացնում եմ ես էլ աչքերիս թացությունը տաք:
Եվ հորիզոնը, ամառվա տապից,
Դարձել է կարծես մանկական մի ճոճք:
Ա՛խ, երանի՜ թե նա ինձ քնացներ
Եվ կամ ստիպեր,
Որ ուրախության ճիչեր ճչայի:
Սակայն այդ ճոճքից
Ուժեղանում է միա՜յն ու միա՜յն գլխապտույտը,
Որով մի հսկա զերո է գծվում՝
Իր մեջ առնելով
Ի՛նձ,
Թռչունների՛ն,
Երկի՛նք ու երկի՜ր,
Եվ դուրս թողնելով
Լոկ հորիզոնն ու մենակությունը,
Որպեսզի... մեկը ճոճվի՜ ու ճոճվի՜,
Մյուսն էլ... քարանա ու հավերժանա...
Ո՛չ մի ժամանակ,

Ո՛չ մի ժամանակ,
Մենք այսպես մենակ ու մենիկ չէինք,
Ինչպես որ հիմա,
Երբ միասին ենք բոլորս առավել,
Քան թե որևէ ուրիշ ժամանակ...

10.XI.1965թ.
Չանախչի